

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

ՀՍՍՀ ԴԱ քղրակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Ժողովրդական բանավեպը միշտ եղել է Ավետիք Իսահակյանի ստեղծագործական կյանքի անդամացած ուղեկիցը: Գրականության մեջ մուտք գործելով անցյալ դարի 90-ական թթ. ղեկավարական և ղուսանական երգերի օրինակով ղրված «Ալաղյաղի մանիներ» բնորոշ վերնաղիւրն ունեցող բանաստեղծական շարքով, Իսահակյանը հետաղայում էլ երբեք կաղերը ղիղեց ժողովրդական բանավեպի հետ:

«Ես ծնվել եմ Հայաստանի սղատմական Շիրակի գավառում: Աղստեղ մանկական իմ երեակաղությունը թեակղորվեց գարերի խորքից եկող բանաստեղծական ֆուղղորով, ղուսանների ու ղյուղացիների երգերով»¹, — խոստովանել է բանաստեղծն իր հողվածներից մեկում:

«Սիրելղաղուղն Շիրակն ինծ համար տիեղերքի կենտրոն է եղել... Աղստեղ, մեր անուղ տատիկներից լսել եմ հողի կախարղող հեքիաթներ, մեր փորձաղատ սղաղիկներից իմաստուն ղրուղյներ, խոսք, առած: Մեր թափառական ղուսաններից և ղյուղացի աղղիկներից լսել եմ մեր ժողովրղի ղքնաղ տաղերն ու խաղերը, մեր մեղուր սղտահուղղ երգերը: Մեր հնաղարղան, խորիմաստ ֆուղղորը, որին ես աղնրաղն ու աղնրաղն երախտաղարտ եմ»², — հավաստել է նա մի ուրիղ առիթով:

Իսահակյանի հետաքրքրությունը, սակաղն, ղի սահմանափակվղ միաղն Շիրակի և միաղն հաղ բանահղուսությունը: Բանավոր ու ղրավոր աղղրություններով լավ ուսումնասիրելով հարաղատ ժողովրղի հարուստ ու հին բանահղուսությունը, նա ծանոթացել է նաե հրեական, հնղկական, ղինական, իրանական, արաբական, կղկասղան, սերբական, ֆիննական, ողսական, ֆրանսիական, ղերմանական առասղլններին, ղրուղյներին, վեղերին, երգերին:

Գրողի անծնական արխիղում սղհաղանված հաղ և աղաղղի բանահղուսական նղությունի բաղմաթիղ ղրառումները, քաղվածքները, նղումներն ու ղիտողությունները ղրա խոստուն վկաղությունն են: Աղ նղությունը հավաստում են, որ Իսահակյանը սղտահական կերաղով ղի օղտաղործել ձեռքն անցած բանահղուսական աղս կամ աղն ստեղծաղործությունը, աղ տարիներ ղարունակ, բանահավաքին ու բանաղետին վաղել ուղաղրությունը ու հետեղականությունը, հետաքրքրվել ու ղբաղվել է ժողովրդական բանավեպի ղանձերով, խորամուղ է եղել ղրանց մեղ, իր բաղմաղա թափառիկ կղանքի ղնթացըում

¹ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողղածու, հատ. 4, Երեան, 1951, էղ 89:

² Նուղն տղղում, էղ 168:

գրի է առել բավական թվով նոր նյութեր և հայտնի նյութերի անհայտ տարրերակներ:

Այս առումով առանձնապես հիշարժան են հայ բանահյուսության բնագավառում կատարած նրա պրպտումներն ու հայտնաբերումները, որոնք կարող են դառնալ առանձին ուսումնասիրության նյութ:

Հատկանշական է և այն հանգամանքը, որ Իսահակյանն առանձնապես բարձր է դնահատել հայ և աշխարհի այն գրողներին ու արվեստագետներին, ովքեր իրենց ստեղծագործությամբ կապված են եղել ժողովրդական բանարվեստի հետ, կամ ինչպես ինքն է ասել՝ «ազգային ֆոլկլորի տարրեր են ունեցել»³: Նա տարբեր առիթներով հիշատակել է Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Պուշկինի, Կոիլովի, Լերմոնտովի, Շեքսպիրի, Նիդամու, Ռուսթավելու, Լոնգֆելլոյի, Հայնեի, Գյոթեի և ուրիշների անունները⁴:

Ժողովրդական բանարվեստի ազդեցությունը Իսահակյանի ստեղծագործության վրա ունեցել է ըստ ամենայնի բազմակողմանի բնույթ: Նա մշակել, փոխադրել, թարգմանել է բանահյուսական տարբեր ժանրի ստեղծագործություններ, գրանց ոճով ու ոգով գրել ինքնուրույն գործեր, իր երկերի մեջ մեջբերումներ արել ժողովրդական երգերից, ավանդություններից, զրույցներից, առած-ասացվածքներից, առակներից:

Ժողովրդական բանարվեստի հանդեպ ունեցած համակողմանի հետաքրքրությունն հետ մեկտեղ գրողն ունեցել է նաև իր հատուկ նախասիրությունները:

1

Ժողովրդական երգերից հետո Իսահակյանի ընտրած բանահյուսական մյուս ժանրը եղել է ավանդությունները: Տարբեր առիթներով բանաստեղծը արտահայտվել է ավանդությունների մասին, բնութագրել զրանց առանձնահատկությունները, դնահատել արժանիքները:

Իսահակյանի հավաստմամբ ավանդությունները հանդիսանում են մարդկային լավագույն երազանքների յուրօրինակ բանաստեղծական արտահայտություն: «Լեզենդները մի ուրե՛կ ժողովրդի լավի, ազնիվի, վեհի, զեղեցկի, ցանկությունների իրականացումներն են: Մարդկային տենչերը, ձգտումները առասպելների, լեզենդների մեջ են գտնում բավարարություն, վարձատրություն», — գրել է նա: Ի՞նչ ուրիշ առիթով բանաստեղծը բացահայտել է ավանդությունների ազգային բնույթը և բնագծել նրանց զեղարվեստական ներդրուման ուժը. «Հայրենիքի ձորերը, դաշտերն ու գետերը, այրերն ու անտառները բնակեցված են ավանդություններով, պատմական հուշերով: Դրանք երկիրը շենցնում են, բովանդակություն, խորություն, խորք տալիս, իմաստավորում, բանական դարձնում, բանաստեղծացնում, վիպային շինում, անհատականացնում, անձնավորում, հոգեղինացնում, մարդկայնացնում, ազգայնացնում, վրան կնիք, գրոշմ դնում, կերպարանք տալիս, թե՛ ձև և թե՛ հոգի»:

³ Էջեր II վ. Իսահակյանի նամակագրությունից» (տե՛ս «Հայրենիքի ձայն», 1975, № 32):

⁴ Ա. Վ. Իսահակյան. Երկերի ժողովածու, հատ. 4:

Իսահականի կարծիքով հատկապես մեծ է ավանդությունների հանաչողական արժեքը, հայրենիքի ու տղոցի սահմանման դործում նրանց ունեցած դերը. «Ժողովրդի համար իր երկրի ավանդություններով կենդանի են անցյալն ու հերոսները: Ժողովուրդը հավատում է իր ազգային լեգենդներին, նրանց իրական լինելուն, պատմականությանը»:

Մասնավորապես հայկական ավանդությունների մասին Իսահականը գրել է. «Հայ ժողովրդի համար Լուսավորիչը եղել է, նա հավատում է Խոր Վիրապին, Տրդատին, Մասիսից բերած քարերին, Նոյան տապանին, Եղիշեի զերեզմանին, Սասունցի Դավթի չրաղացին... Երբ ժողովուրդն այլևս դադարում է հավատալուց, նա շորանում է, կորցնում է երկրի սուղիայի զգացումը, նրա նվիրականությունը: Երկիրը, հայրենիքը դառնում է նրա համար օտար երկիր, անտարբեր վերաբերմունքով»⁵:

Ժողովրդական ավանդությունների վերաբերյալ Իսահականի արտահայտած մտքերը ինքնին բացահայտում են բանաստեղծի վերաբերմունքը բանահյուսական տվյալ ժանրի նկատմամբ: Դրանք միաժամանակ բացատրում են, թե ինչու է նա իր կյանքի տարբեր տարիներին հաճախակի դիմել այդ ստեղծագործություններին, զբաղվել դրանց զեղարվեստական մշակման գործով, ստեղծել բազմաթիվ, մեկը մյուսից մեծարժեք գրական գոհարներ: Թուժանյանի նման Իսահականը ևս ինքնաբերաբար հաստատել է տասնամյակների առաջ Բաֆֆու արած կանխակոսհումը, ըստ որի՝ «մի կտորիկ ժողովրդական լեգենդայի վերա սուտը կարող է հիմնել յուր հոյակապ ստեղծագործության շինվածքը»⁶:

Բանաստեղծի մշակած ժողովրդական ավանդությունների մեջ իրենց դադարարական և զեղարվեստական արժանիքներով հիշարժան են նախ և առաջ հայրենիքի թեմային նվիրված ստեղծագործությունները: Եվ դա պատահական չէ: Հայրենիքը Իսահականի համար եղել է իր իսկ խոսքերով՝ «հողովորտով գուրգուրված այն նվիրական հողը, ուր կան այնքան քաղցր ձայներ, հին-հին դարերից եկած հարազատների ձայներ, նահատակների ձայներ, հերոսների ձայներ: Ուր կան մտերիմ ղեմքեր, քնարական դաշտեր, վիպական լեռներ, ժողովուրդը աշխատավոր և արդար, Հայաստանի պատկանելի ժայռերից ծնված, քարից հաց հանող և քարից հրաշքներ կերտող հայ ժողովուրդը»⁷:

Հայրենիքին նվիրված բնդհանուր բնույթի գործերի հետ, Իսահականի մշակած ժողովրդական ավանդությունների շարքում կարևոր տեղ են զբաղում հատկապես Հայաստանի և հայ ժողովրդի ազգային ճակատագիրը պատկերող ստեղծագործությունները: Այլ կերպ չէլ կարող լինել: Անցյալի հայ առաջավոր հեղինակներից շատերին, այդ թվում նաև Իսահականին, հույզող ամենացավոտ հարցերից մեկն է եղել դա, որին նրանք անդրադարձել են իրենց պատմական, զեղարվեստական և հրապարակախոսական բազմաթիվ երկերում: Դեռևս 1908 թ. իր «Դու չես հասկանա» նշանավոր բանաստեղծության մեջ Իսահականը գրել է.

⁵ Ա. Վ. Իսահական, Խոսքումներ (տե՛ս «Գրական թերթ», 1960, № 44), Անտիպ էջերից (տե՛ս «Գրական թերթ», 1967, № 44):

⁶ Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 78:

⁷ Ա. Վ. Իսահական, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 161:

Չեմ տեսնում շինդ զարդերը գարնան,
Վշտից խավարեց գոհարն աշխարհս,
Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա,
Զուր ես հարցրեմ սլափառը վշտիս:

Յս դավակ ննշված ու դժբախտ ազգի,
Ուր արշուճով է իր ուղին քրքում.
Ուր դարեր, դարեր քափը իր բազկի
Շղթան է կրծում ժանգոտ, շառաշուն...⁸:

Իսահակյանի մշակած ժողովրդական ավանդությունների մեջ տվյալ առումով բնորոշ է նրա «Արաքսի ծնունդը» խորագրով ստեղծագործությունը, որը գրվել է 1904 թ. Նոր-Նախիջևանում⁹: Գրվածքի համար, հավանաբար, ստեղծագործական զրդում է հանդիսացել Բյուրակնյան լեռների ծագման վերաբերյալ նույն լեռների շրջակա հայ և քուրդ բնակչության միջավայրում հյուսված հայտնի ավանդությունը, որը բանավոր ձևով տարածված է Լեզի Մուշում, Խնուսում, Բասենում, Շիրակում, Զավախքում և այլուր: Նրա գրավոր մի քանի տարբերակները տպագրված են Գարեգին Սրվանձտյանի «Գրոց-Բրոց», Երվանդ Լալայանի «Զավախքի բուրմունք» ժողովածուներում¹⁰: Իսահակյանին ավանդությունը կարող էր հայտնի լինել ինչպես բանավոր (հատկապես հայրենի Շիրակում տարածված պատումը), այնպես էլ նշված զրավոր աղբյուրներից, որոնց քաջ տեղյակ էր նա:

«Արաքսի ծնունդը» ավանդության վերնագրի տակ փակագծերի մեջ զրված «Աշուղ Վշտալիի զրույցը» արտահայտությունը, մեր համոզմամբ, ոչ թե ավանդության սկզբնաղբյուրի հասցեն է, այլ բանաստեղծի զրչին պատկանող սովորական գրական մի միստիֆիկացիա, քանի որ այդ անունով աշուղ, որքան հայտնի է, չի Լեզի մեզանում:

Ըստ ժողովրդական ավանդության Դիրակ-Զավախքյան տարբերակի՝ մի կույր աղջիկ իր Լեզոր հետ Մշո և էրզրումի մեջ ընկած լեռներում ոչխար է արածացնելիս լինում: Մի օր էլ, երբ նա լվացվում է այդ լեռների աղբյուրներից մեկի ջրով, վերագտնում է աչքերի լույսը: Ուրախ-զվարթ տուն է բնկնում: Մոռոնները հարցնում են. «Ինչպե՞ս Լեզավ, որ աչքերդ բուժվեցին»: Աղջիկն ասում է. «Լեռան կատարին մի աղբյուր կար, լվացվեցի նրա ջրով և աչքերիս լույսը բացվեց»: Վաղում են գեպի աղչկա նշած լեռը, և ի՞նչ տեսնեն, ոչ թե մեկ, այլ հազարավոր աղբյուրներ են զլգլում: Ավանդությունն ասում է, որ լեռան անունը դրանից հետո Բինգյոլ (Բյուրակն) են կոչում:

Մյուս տարբերակներում հրաշագործ աղբյուրի ջրով, կույր աղջկա փոխարեն, կենդանանում կամ բուժվում են մորթված աղավինին, ճնճղուկը, հիվանդ ու վիրավոր օձերը:

Հիմք ընդունելով ընդամենը մի քանի տող կաղամող վերահիշյալ Բնաշխարհիկ ավանդությունը, Իսահակյանը ստեղծել է հիմնականում ինքնուրույն

⁸ Ա. վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1973, էջ 242:

⁹ Նույն տեղում, հատ. 2, Երևան, 1974, էջ 166—168:

¹⁰ Գ. Սրվանձտյան, Դրոց ու Բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 86—87: Ե. Լալայան, Զավախքի բուրմունք, Սիֆլիս, 1892, էջ 59:

սլուծե, կառուցվածք և դադափարական լիցքավորում ունեցող բավական ծավալուն (70 տող) չափածո գրական մի երկ:

Շատ բանաստեղծի մշակման, այլազգի բռնավորը հարադատ մոր գրկից առևանգում է զստերը: Հովիվ տղան, թողնելով ոչխարի հոտը, գնում է սիրած աղջկա ետևից: Գտնելով սիրածին բռնավորի գրկում, նա տեղն ու տեղը սրախողխող է անում առևանգիչին: Սրա հավատարիմ ծառաները վրա հասնելով՝ սպանում են թե՛ հովիվ տղային և թե՛ աղջկան: Տղայի մայրը երկար որոնումներից հետո ի վերջո գտնում է իր միամոր դավակին ու հարսին սպանված վիճակում: Դառնորեն ողբալով համբուրում է նրանց նշխարները և ավանդում է հողին: Մոր, տղայի ու աղջկա թափած արյուն-արցունքից հայոց լեռներում հազարավոր աղբյուրներ ու ծաղիկներ են դոյանում: Եվ այդ օրվանից լեռները ստանում են Բյուրակնյան անունը:

«Արաբի ծնունդը» ավանդության մեջ Խառնակյանը պատկերել է նախ և առաջ Հայկական լեռնաշխարհի բնության առանձնահատկությունները.

Խորունկ են Հայոց ձորերը անտակ,
Սարերը բարձր, բարձրաշեն գմբեք.—
Այդ սար ու ձորում հնուր ժամանակ
Մի հայ մայր կապրել իրեն որդու հետ...:

Այնուհետև, այդ շրջապատի մեջ նա վերարտադրել է ավանդության հերոսների բնատանեկան վիճակը, դրադմոսը, կենցաղը, հովիվ տղայի ու նրանց հարևան գեղեցիկ աղջկա երազային սիրո պատմությունը.

Ինչպես կր հեշե ծաղկունանց միջով
Սարի հովն անուշ,—
Այդպես մեղրածայն՝
Հոտն առաջ ձգած՝ սրինգ փչելով
Իրկուն տուն կուգար միամոր տղան...:

Շարունակության մեջ բանաստեղծական կենդանի գույներով տրված է վայրի հորդաններից մեկի ներխուժումը Հայաստան, նրանց զործած ավերն ու սպանությունները.

Ուտեղի՞ց որ էր, մեր աշխարհն մտան
Հայի թշնամի-մարդակերպ գազան,
Եկան ֆանդեցին մեր տունն ու այգին,
Ման, ավեր բերին մեր շեն աշխարհին:

Եվ մի օր եկավ մի վայրի հորդա,
Ու այդ հորդայի գլուխ-բռնասլետ
Տեսավ նազելի սիրուն աղջկան,
Խլեց մոր գրկեն ու տարավ իր հետ:

Բանաստեղծը դեղարվեստական նշանակալից ընդհանրացում է կատարել հատկապես իր գրվածքի վերջնամասում, թշնամու զործած ավերի հետև-

վանքով մոռալ. տեսք ստացած հայոց լեռների ու նրանցից ցած հոսող ու Արաքս դետը կազմող բյուրավոր ակների գունեղ պատկերով.

Այն սև օրվանեն Բյուրակն են կոչվել
Գմբեք սաբեր բյուր-աղբյուրներով.
Այն սև օրվանեն սաբերն են զուգվել
Զոնված արյունի վառ ծաղիկներով:

Ու այդ ակները հայոց սաբերեն
Իջել են. կու գան ու կիջեն էլի՝
Հյուսվելով իրար՝ մեկտեղ դառել են
Մեր մայր-Արաքսը՝ հագար սիրելի:

2

Հայրենիքի նման նվիրական է եղել Բաահակյանի համար և մոր թեման: Մոր կերպարի մեջ բանաստեղծը խորհրդանշել է մարդկային, հասարակական ամենավսեմ զգացմունքներն ու զաղափարները—անձնազոհություն, սեր, զեպի բարին, ազնիվը, կարեկցանք թշվառների, զրկվածների ու հալածվածների նկատմամբ, նվիրվածություն հարազատ երկրին ու ժողովրդին: Այդպես է թելադրել Բաահակյանին կյանքը, այդ է ներշնչել նրան հարազատ մայրը, որից, իր իսկ խոստովանությամբ, շատ ուրիշ լավ բաների հետ, նա սովորել է «սիրել ամբողջ աշխատավոր. մարդկությունը, սիրել հայրենի երկիրը, նրա բնությունը»¹¹:

Ահա թե ինչու ոչ միայն իր քնարական բանաստեղծությունների, այլև ավանդությունների մեջ Բաահակյանը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է մոր թեմային:

Բնորոշ է այս առումով բանաստեղծի «Մայրը» խորագրով ավանդությունը՝ ստեղծված 1907 թ. Ալեքսանդրապոլում¹²: Գրվածքի համար հիմք է հանդիսացել ժողովրդական մի ավանդություն, որը հեղինակի վկայությամբ ինքը լսել է նույն թվականին, զաղարապատցի մի ղեղձուկից: Ըստ այդ ավանդության հարսը զրպարտությամբ հարկադրում է ամուսնուն վտարել տանից սկեսորին: Զկարողանալով դիմադրալվել կնոջ խարդավանքներին, ամուսինը ստիպված պարկի մեջ է դնում զառամյալ մորը և տանելով մի խուլ անտառ, պարկի հետ միասին թողնում է այնտեղ: Վերադառնալիս որդու ականջին են հասնում մոր բարեմաղթության խոսքերը, նրա խորհուրդը պարկը տուն տանելու մասին՝ իբրև տան համար պիտանի առարկայի:

Քանի որ մեր ձեռքի տակ եղած Բաահակյանի լսած ավանդության ոչ թե բուն սկզբնաղբյուրի գրառումն է, այլ նրա բովանդակության կմախքը միայն, որը ժամանակին անձամբ հաղորդել է մեզ ինքը բանաստեղծը¹³, հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի մասին ավելի ճիշտ պատկերա-

11 Ա. վ. Բաահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 89:

12 Նույն տեղում, հատ. 2, էջ 169—171:

13 Ա. Ղանալանյան, Ա. վ. Բաահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1955, էջ 29—30:

ցում տալու համար նկատի ունենք նույն ավանդության հայ և այլազգի մի քանի ժողովրդական տարբերակների բառացի գրառումները ևս: Դրանց մի մասի մեջ պառավ մորը փոխարինում է հիվանդ ու ծերունի հայրը կամ «աչք ու ոտքից ընկած» պապը, տույրակին՝ քթոցը, իսկ մոր բարեմաղթության խոսքի փոխարեն էլ՝ տղայի հայրը կամ սրա թոռը ասում են, որ տույրակը կամ քթոցը անհրաժեշտ է տուն վերադարձնել, որսյեսզի, երբ ինքը ծերանա, նրանով իրեն ևս տանից ղուրս նետեն¹⁴:

Մշակելով իր լսած ժողովրդական ավանդությունը, իսահակյանը ղգալիորեն վերափոխել է այն: Նա չափածո բանաստեղծության է վերածել ձևերի տակ եղած արձակ պատումը, կատարել է նշանակալից հավելումներ, որով ավելի է տիպականացրել գործող անձանց, ստեղծել է հավելյալ դրվագներ, քնարական հուզիչ պահեր:

Մշակման մեջ հիմնական շեշտը դրված է մոր ծնողական անձնազոհության վրա, մի գաղափար, որն այնքա՛ն հարազատ է մայրական սիրո մեծ երգչի բանաստեղծական էությանը, և որը տարբեր ձևերով ու երանգներով դեղարվեստական մարմնավորում է ստացել նրա թե՛ չափածո և թե՛ արձակ մի շարք գրվածքներում:

«Մայրը» ավանդությունը սկսվում է քնարական սրտառուչ մի նախերգով, որը բացակայում է մեզ հայտնի ժողովրդական բոլոր սկզբնաղբյուրներում: Ընթերցողին նախապատրաստելու նպատակով բանաստեղծը սկզբից տվել է աշնանային բնության տխուր պատկերը և այդ հենքի վրա բացահայտել հին աշխարհում գոյություն ունեցող շարիքների և դրանց անմեղ ղոհների վերաբերյալ իրեն պաշարած ծանր խոհը:

Անտառներում՝ աշնան քափուր,
Երբ քաց խավառն է իջնում.
Երբ դաշտերում մերկ ու տխուր,
Ցուրտ ֆամին է շառաշում,—
Ամեն անգամ ըզգում եմ նոս
Ձուլցն այս խեղճ պառավ մոր:
Եվ խորհում եմ՝ քե արդյո՞ք ո՞ւր,
Մեզնից մոտիկ կամ հեռուն,
Ո՛ր անտերունչ խեղճին հիմա
Չարի ձեռքն է հարվածում...:

Ավանդության ժողովրդական սկզբնաղբյուրներում գործող անձանց ով լինելու վերաբերյալ կա մեկ-երկու բառ կամ ածական միայն («պառավ մայր», «խեղճ տղա», «չար հարս» և այլն), նրանք հիմնականում բացահայտված են իրենց արարմունքներով: Իսահակյանը մի փոքր բացել է «փակագծերը», ընթերցողին ավելի հանգամանորեն ծանոթացնելու համար այդ գործող անձանց հետ: Սեղմ, բայց արտահայտիչ նկարագրերով ու երկխոսություններով ցուցադրված է նրանց ինքնությունը. մայրը՝ իբրև ֆիզիկական անօգ-

¹⁴ Հ. Մկրտչյան, Կարոն բարբառ, Երևան, 1952, էջ 108—109 («Հարասեր որսիկ»): Է. Աղայան, Մեղու բարբառ, Երևան, 1954, էջ 357:

նական վիճակում գտնվող խոնարհ ու հեղ մի էակ, տղան՝ իբրև բարի, բայց թույլ ու անկամ արարած, իսկ հարսն էլ՝ իբրև անզուրկ ու տմարդի մեկը:

Ավանդության ժողովրդական սկզբնաղբյուրներում բացակայում են շրջապատի միջավայրի ու բնության նկարագրությունները: Իսահակյանի մշակման մեջ շրջապատի միջավայրն ու բնությունը նպաստում են մարդկային բնավորություններն ու վերարտադրվող անցուդարձը ավելի առարկայական դարձնելուն: Առանձնապես աչքի են ընկնում բանաստեղծի գրչին պատկանող բնապատկերները, որոնք վարպետորեն օգտագործված են իբրև հոգեբանական զուգահեռներ: Դրանցից է, օրինակ, ակամայից հանցագործ դարձած որդու ծանր հոգևվիճակն ընդգծող հետևյալ պատկերը.

Թշվառ մարդն էր. նաբ կտրած,
Վերցրեց մոր պառավ,
Անգույն հարսի աչքի առաջ
Պարկր դեկ, ուսն առավ:
Գլուխը կուր՝ նամվա ընկավ,
Միտքը՝ մռայլ ու խուլուր,
Սև ամպերից գիշերն իջավ,
Համփան՝ մրին ու մոլուր...:

Նման մի դուգահեռ է նաև Իսահակյանի մշակման վերջաբանը, ուր ընթերցողի աչքի առաջ հառնում է իր զավակին անհունորեն նվիրված սիրող մոր հոգու անսահման հարստությունը.

... Աշնան փամին էր հեծկլտում,
Գալլն էր տալիս կալանչին,
Ոտքը փոխեց, ու դառնաւ տուն,
Մոր ձայնն հասավ ականջին.—
«Երբաս բաբով, աստված քեզ հետ,
Ոտքդ քաշի բոլ չրգա.
Տրդա՛ս, վերցրու պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կրգա:

Հակառակ համապատասխան ժողովրդական սկզբնաղբյուրների, ուր մոր (բոստ ալ տարբերակների՝ հոր կամ պապի) խոսքերի մեջ երևան է գալիս որդուն (կամ թոռանը) ուղղված անսքող նախատինքը՝ նրանց երախտամոռության համար, Իսահակյանի գրվածքում շեշտը դրված է դորոժագով մոր՝ հարազատ որդու հանդեպ ունեցած ցավի ու հոգատարության վրա, որը վիրավորանքի ու անեծքի փոխարեն ներողամտությամբ և օրհնանքով է պատասխանում որդու աններելի արարքին:

3

Իսահակյանի մշակած ժողովրդական ավանդությունների շարքում քիչ չեն նաև սիրուն նվիրված ստեղծագործությունները: Ինչպես իր զրական մյուս երկերում, աչնպես էլ այստեղ, բանաստեղծը սեփական կենսագրության և շրջապատի հասարակական միջավայրի հենքի վրա բացահայտել է սիրո

զգացման հակասական ու բարդ էությունը, նրա հարուցած ուրախության ու վշտի զգացմունքները: Դեղարվեստական խոսքի մեծ ուժով բանաստեղծը պատկերել է երազային, անաղարտ սիրո ասորումները, անարձագանք սիրո ողբերգությունը:

Ստեղծագործական ներշնչման հատուկ առարկա է դարձել Բսահակյանի համար հասարակական-բարոյական բարձր գաղափարներով և մարդկային ասելիվ հույզերով տոգորված սիրո ուժանտիկան, որն ընդունակ է մարդուն մղելու ղեպի անձնազոհություն, ղեպի հերոսացում, արհամարհել տալու մահը:

Բանաստեղծի՝ սիրուն նվիրված բանաստեղծական մշակումները գեղարվեստականի հետ ունեն նաև ճանաչողական նշանակալից արժեք: Լինելով հեղինակի անհատական ասորումների ու խոհերի արգասիքը, դրանք միաժամանակ հանդիսանում են նրա ասորած դարաշրջանի մարդկանց հույզերի ու մտորումների հարազատ արտահայտություն:

Տարբեր ձևերի, ոճական ուրույն միջոցների օգնությամբ Բսահակյանը ցույց է տվել, թե ինչ կերպ սիրո երջանկության զգացումը վեր է ածվում իր հակադրությանը, երբ նրան արգելք են դառնում տիրող հասարակական-քաղաքական պայմանները (ընչքային անհավասարություն, նյութական ասպահովության բացակայություն, քաղաքական ճնշում, բռնություն):

Երազած իդեալական սերը բանաստեղծը որոնել է նահապետական անցյալի կենցաղային հարաբերությունների մեջ, միջնադարյան ասպետների և սարի հովիվների պարզ կյանքի պայմաններում, հակադրել այդ սերը քաղքեմ-նիական այլասերվածությանն ու «ծախու» սիրուն:

Ցավով ու կսկիծով վերարտադրելով իրական սիրո ողբերգությունը, նա փարել է սիրո ուժանտիկային:

Սիրո մասին գրված իսահակյանական բազմաթիվ շափածո և արձակ ստեղծագործությունների շարքում իր գաղափարական ուժով և գեղարվեստական արժանիքներով առաջնակարգ տեղերից մեկը գրավում է նրա «Հավերժական սերը»¹⁵ խորագրով ավանդությունը, որը գրվել է 1914 թ. Բեռլինում: Ավանդության զուգահեռները կարելի է գտնել տարբեր ազգերի բանաստեղծության մեջ: Դրանցից մեկի գրական մշակումն է Մաքսիմ Գորկու հայտնի «Աղջիկն ու մահը»:

«Հավերժական սերը» գրվածքի համար բանաստեղծին նյութ է ծառայել ՎI դարի II կեսի նշանավոր արաբ բանաստեղծ ու ռազմիկ Անթար Իբն Շադդադիի սիրավեպի և մղած հերոսամարտերի շուրջը բանաստեղծի կենդանության օրոք և դարեր հետո հյուսված բանավոր ու գրավոր պատումներից մեկը, որոնք ժամանակին մեծ տարածում են ունեցել՝ թարգմանվելով, փոխադրվելով և մշակվելով ինչպես արևելյան, այնպես էլ եվրոպական մի շարք ազգերի գրականության մեջ: Դրանց արձագանքները գտնում ենք նաև ռուս և հայ գրականության մեջ: Նկատի ունենք ռուս նշանավոր արևելագետ, գրող ու լրագրող Օ. Ի. Սենկովսկու 1833-ին «Նովոսելյե» ժողովածուում լույս տեսած «Անյար» վերնագրով վեպը, գրված արաբական պոեզիայի համապատասխան մոտիվների ոգով ու ոճով, «Բազմավեպի» 1858 և 1859 թթ. հինգ համարներում շարունակաբար հրատարակված «Անդար արաբացի քերթված» խորա-

15 Ա. Բ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 179—182:

գրով փոխադրությունը, ուր պատմվում է Անթարի մանկության, պատանեկության տարիների կյանքի, իր ցեղակից բեղվիհների պաշտպանության համար մղած հերոսամարտերի և նրա անձնական սիրո մասին և, վերջապես, «Հյուսիսսփայլի» 1859 թ. № 1-ում (էջ 15—41) տպագրված գրվածքը՝ «Անթար» վերնագրով, որի տակ կա Գ. Հ. Պախալյան ստորագրությունը:

Իսահակյանի խոստովանությամբ ինքը օգտագործել է Անթարի սիրապատումին նվիրված արաբական զրույցի եվրոպական թարգմանություն-փոխադրություններից մեկը¹⁶: Բացառված չէ, որ նա ծանոթ եղած լինի նույն նյութի վերոհիշյալ ուսական և հայկական հրատարակումներին, մասնավորապես «Հյուսիսսփայլում» տպվածին, որը ոչ այլ ինչ է, բայց Լևոն Լեոնովսկու վնասի բովանդակության հայերեն վերարտադրությունը¹⁷:

Բանաստեղծի ձևերի տակ եղած նյութի սեղմ բովանդակությունը հետևյալն է: Շամ անապատում գտնվող Թաղմորի ավերակների բնակչուհի հրաշագեղ բեղվիհն փերին՝ Գյուլ-Նազար անունով, սիրո երջանկություն է խոստանում «անապատների զարդ» և «հաղթության սուր» Անթար բեղվիհին: Սա ընդունում է Գյուլ-Նազարի առաջարկը, պայմանով՝ երբ նա նկատի, որ դառնություն է մտնում իրենց սիրո մեջ՝ վերջ տա իր կյանքին: Տարիներ են անցնում... Բուռն սիրո պատճառած մեծ վնասվածք սկսում է աստիճանաբար սառչել Անթարի մեջ: Զղալով այդ Գյուլ-Նազարը, հավատարիմ իր ուխտին, վերջին կրակոտ համբույրի հետ առնում է նրա հոգին: Սակայն Գյուլ-Նազարի մեջ զրանից հետո էլ չի մեղմում Անթարի նկատմամբ իր տաժած սիրո զգացումը: Առանց բաց թողնելու նրա անշնչացած մարմինն իր գրկից, Գյուլ-Նազարը շարունակում է սիրել իր տարփածուին և մինչև վերջ զգված մնալ սիրեցյալ էակի հողեղեն նշխարներին...

Հիշյալ պատմությունը Իսահակյանի համար հանդիսացել է յուրօրինակ մի հենք, որի վրա նա բանաստեղծական նրբին պատկերներով և գունեղ բաներով «ասեղնագործել» է մի հոյակապ ինքնուրույն ղեղարվեստական ստեղծագործություն, տալով նրան «Հավերժական սեռ» խոստուն վերնադիրը:

Բանաստեղծը գիտակցորեն կրճատել է սկզբնաղբյուրի այն հատվածները, ուր զրվատված են վրեժխնդրությունն ու իշխանությունը, իբրև իր էությանը խորթ երևույթներ, և թողել միայն Անթարի ու Գյուլ-Նազարի սիրո հույզիչ պատմությունը, մի զգացում, որը բանաստեղծի խորին համոզմամբ մարդկային կյանքի ամենավսեմ ու թանկագին գործոնն է:

Նա իր կողմից ավելացրել է նոր ու գեղեցիկ զրվագներ (Թաղմորի հիասքանչ ավերակների ղեղարվեստական նկարազրությունը, Գյուլ-Նազարի շքեղ ասպարանքի պատկերումը, Գյուլ-Նազարի արտաքին ու ներքին բարեմասնությունների բանաստեղծական հիանալի վերարտադրությունը և այլն) կամ էլ բնղլայնել է այդ առթիվ սկզբնաղբյուրում եղած հպանցիկ ու սեղմ ակնարկները: Առավել գունագեղ, ճոխ ու պատկերավոր է դարձրել լեզուն ու ոճը, արձակ պատումը վերածվել է ռիթմիկ շափածո բանաստեղծության, զվարավոր հերոսի Անթար անունը փոխարինել է ավելի պատմական երանգ ունեցող Էլ-Սամանով, ուժեղացրել է սկզբնաղբյուրի մեջ առկա ֆանտաստիկ,

¹⁶ Դ. Մխիթարյան, «Հյուսիսսփայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 174:

¹⁷ Դ. Գաբունյան, Մի առեղծվածային ազգային շուրջը (տե՛ս «Գրական թերթ», 1967, № 13):

քնարա-վիպային տարրերը, որով նրա երկը օժտվել է բայլադի ժանրային որոշակի տարրերով:

Իսահակյանի «Հավերժական սերը» ավանդությունը աչքի է ընկնում ընդգծված արևելյան երանգավորումով: Գրվածքի գեղարվեստական սքանչելի դրվագներից է Թաղմորի ապարանքի պատկերը.

Լուսակերտ է ապարանքի Թալմորի,
Անապատում, որպես Երազ ոսկեհյուս.
Յոթն հարյուր սլունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը երկնասույգ:

Շուրջը նազուկ արմավենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք հավեր կառուտով,
Շատրվաններն հուրհրում են կրակներ,
Մաղիկները պննագարդում արծաթով...:

Թաղմորի ապարանքի նկարագրությունը չի դիջում էլ-Սամանի հրաշագեղ բամբիշի գովքը.

Գահի վրա երիտասարդ էլ-Սաման
Մեղմ գրկել է հրաշագեղ բամբիշին.
Կրծքի վրա հյուսքը նրա—ծփծփան,
Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին:

Փերուզ ծովը, որ փարում է մշտաբուր
Սեպ ժայռերը Լիրանանի փեշերի՝
Չունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ձյունաբույր,
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիշի...:

Իսահակյանի ստեղծագործության փիլիսոփայական առանցքը կազմում է սիրո զգացման կենսահաստատ, ամենակարող ուժը, որն ի վիճակի է հաղթահարելու ինչպես բնության, այնպես էլ հասարակական կյանքի հակոտնյա ուժերը, ոչնչացնելու շարն ու շարիքը, հաստատելու բարին ու ազնիվը, հաղթելու անգամ մահին:

Բանաստեղծական խոսքի անկրկնելի պաթոսով են շնչում էլ-Սամանի սիրային խոստովանություններին նվիրված տողերը, ուր ինքնատիպ պատկերներով բացահայտված է հեղինակի հավատամբը հավերժող ու անանց սիրո մասին.

— Բարձր են երկնի ձեղունները, նազելի՛ս,
Բայց իմ սերը բարձրարժ է նրանցից.
Խոր են երկրի ճիմումները, նազելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից...

Ժամանակը իր վախճանին կնասնի,
Եվ արևը մի բուռ մոխիր կզառնա,

Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...»:

Բանահյուսական նյութերի հիման վրա, այդ նյութերի զրգամամբ տարբեր տարիների գրված ստեղծագործություններ են նաև Իսահակյանի՝ «Հայրենի հողը» (1921), «Ժողովրդի քնարը» (1937), «Իրիցկնկա աղբյուրը» (1891), «Պանդուխտ որդին» (1902), «Լևյի և Մեջլում» (1910), «Ասպետի սերը» (1917), «Մոր սիրտը» (1919), «Լիլիթ» (1921), «Աղջկա ամրոցը» (1922), «Որդիական սեր» (1926), «Աթիլան և իր սուրը» (1932), «Հոտն ու հովիվը» (1937), «Հայաստան» (1946) խորագրերով ավանդությունները և այլն¹⁰:

Բերված վիաստերի և արված դիտարկումների հիման վրա կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացության:

Նյութեր քաղելով ժողովրդական բանահյուսությունից, Ավետիք Իսահակյանը զրանց վրա դրել է իր մեծ անհատականության անշեջի դրոշմը՝ տոգորել զրանք սևփական աշխարհայացքով, աշխարհըգացողությամբ, փիլիսոփայական ու գեղագիտական ինքնօրինակ ըմբռնումներով:

Սնվելով ժողովրդական բանահյուսության կենսավետ ակունքներից, իսահակյանական ավանդությունները անցել են նրա գեղարվեստական մշակման բովով, հղկվել, բյուրեղացել: Ժողովրդական բանավեստի բարերար ազդեցությամբ բանաստեղծն իր արտահայտած համամարդկային գաղափարներն ու զգացումները ավելի հաջողությամբ է ձուլել ազգային ձևերի մեջ, առավել կատարյալ է դարձրել իր երկերի ներքին ու արտաքին ներդաշնակությունը, ժողովրդի կյանքից վերցված կերպարների միջավայրը, նրանց հոգեկան աշխարհը, բնավորությունը, կենցաղն ու բարքերը:

Իսահակյանի բանահյուսական բոլոր մշակումները, այդ թվում նաև ավանդությունները, անկախ զրանց ժանրային, ոճական ու այլ կարգի տարբերություններից, թափանցված են անցյալի իրականության հանդեպ գրողի ունեցած դժգոհության տրամադրություններով, խոր հավատով դեպի լուսավոր ապագան, ժողովրդին ու նրա բանավեստին բնորոշ այնպիսի հատկություններով, ինչպիսիք են՝ լավատեսությունը, ազատասիրությունը, մարդասիրությունը:

Մուտք գործելով բանաստեղծի ստեղծագործական աշխարհի խորքը, ժողովրդի բառ ու բանը հավելյալ հուզականություն է հաղորդել նրա երկերին, ավելի առարկայական ու անմիջական դարձրել զրանք:

Ավետիք Իսահակյանի ժողովրդական բանահյուսության ակունքների հետ կապված բոլոր մյուս ստեղծագործությունների նման, նրա մշակած ավանդությունները ևս հայ զրականության թանկագին զոհարներից են: Դրանք, առանց վերադասության, կարող են դասվել ժողովրդական ավանդությունների այնպիսի լավագույն մշակումների շարքը, ինչպիսիք են՝ Գյոթեի, Շիլլերի, Պուշկինի, Լերմոնտովի, Շեքսպիրի, Թոմասյանի և մյուս մեծերի հայտնի մշակումները:

¹⁰ Ավ. Իսահակյան, երկերի ժողովածու, հատ. 2, էջ 159—227:

НАРОДНЫЕ ПРЕДАНИЯ В ОБРАБОТКЕ ИСААКЯНА

Член-корр. АН АрмССР А. Т. ГАНАЛЯН

(Резюме)

Предания являются одним из тех основных жанров народного творчества, к которым в течение своей многолетней литературной деятельности нередко обращался Ав. Исаакян. Они, по мнению поэта, — выражение лучших стремлений народа, «реализация» его чаяний. В них живет прошлое народа, его герои. Внимание Исаакяна особенно привлекали те предания, как армянского, так и других народов, которые посвящены родине, матери и любви. Занимаясь литературной обработкой последних, Исаакян облек их в новые формы образного воплощения, оставив на них неизгладимый отпечаток своей творческой индивидуальности, своих философских и эстетических воззрений. Лучшие образцы художественных обработок народных преданий Ав. Исаакяна («Родная земля», «Рождение Аракса», «Лира народа», «Мать», «Сердце матери», «Вечная любовь», «Лилит») вошли в сокровищницу армянской литературы.